ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹՐՆԵՇՆԼ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԱԲԿԻՐԻ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ծրագրի հաշվետվություն

Երևան 2004թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4
Աղյուսակ Ա. Ընտրանքային կետերը 4
ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 7
Պատկեր 1. Ընդհանուր առմամբ, ի՞նչ կարծիքի եք Ոստիկանության Արաբկիրի բաժնի, վերջինիս աշխատակիցների և նրանց կողմից մատուցված ծառայությունների մասին 7
Պատկեր 2. Վերջին երկու տարիների ընթացքում քանի՞ անգամ եք առնչվել Ոստիկանության Արաբկիրի բաժնի որևէ աշխատակցի հետ 7
Պատկեր 3. Ի՞նչ կարգի հարցերով եք վերջին անգամ առնչվել Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետ 8
Պատկեր 4. Ինչպե՞ս կամ որտե՞ղ եք վերջին անգամ առնչվել ոստիկանության հետ 8
Պատկեր 5. Գո՞հ եք արդյոք ոստիկանության հետ Ձեր վերջին շփումից 9
Պատկեր 6. Ձեր վերջին շփումների արդյունքներով, ինչպե՞ս եք գնահատում Արաբկիրի Ոստիկանության բաժնի գործունեությունը հետևյալ ուղղություններում 9
Պատկեր 7. Նշեք թե ի՞նչ չափով եք համամիտ կամ դեմ հետևյալ պնդումներին 10
Պատկեր 8. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք Ձեզ ապահով զգում Ձեր թաղամասում 10
Պատկեր 9. Վերջին տարվա ընթացքում դուք երբևէ մտածել ե՞ք տեղափոխվել այլ շրջան հանցագործության և անվտանգության պատճառներից ելնելով 11
Պատկեր 10. Արդյոք դուք սահմանափակել կամ փոխել ե՞ք ձեր աշխատանքը վերջին մի քանի տարիների ընթացքում հանցագործության զոհ դառնալու վախի պատճառով 11
Պատկեր 11. Ձեր կարծիքով ի՞նչ արդյունավետությամբ է Ոստիկանության Արաբկիրի բաժինը ապահովում ձեր համայնքի անվտանգությունը 11
Պատկեր 12. Որքա՞ն վստահություն ունեք հանցագործության կանխարգելման հարցում Արաբկիրի Ոստիկանության կարողությունների նկատմամբ 12
Պատկեր 13. Որքանո՞վ են ձեր կարծիքով հետևյալ հանցատեսակները ազդում Արաբկիրի շրջանի բնակիչների կյանքի որակի վրա 12
Պատկեր 14. Ի՞նչ հիմքերով է ձևավորվել ձեր կարծիքը Արաբկիրի շրջանում հանցավորության և անվտանգության խնդիրների վերաբերյալ 13
Պատկեր 15. Վերջին երկու տարիների ընթացքում դուք երբևէ դարձել ե՞ք որևէ հանցագործության զոհ, որը պատահել է ձեր տարածքում, և որի մասին դուք չեք հայտնել ոստիկանությանը 13
Պատկեր 15.1. Եթե այո, ապա հանցագործության ինչ՞ տեսակ էր այն 14
Պատկեր 16. Դուք գիտե՞ք վերջին երկու տարիներին հանցագործության զոհ դարձած այլ անձանց, ում կողմից այդ մասին չի հաղորդվել ոստիկանությանը 14
Պատկեր 17. Ինչո՞ւ չեք հայտնել հանցագործության մասին 15
Պատկեր 18. Մենք ցանկանում ենք տեղեկանալ կոնկրետ հանցատեսակի,. անկարգության և կենսակերպի վրա ազդող այլ խնդիրների մասին, որոնք անհանգստացնում են Ձեզ Արաբկիրի շրջանում 15
Աղյուսակ Բ. Հանցագործության, անկարգության և կենսակերպի վրա ազդող խնդիրների մանրամասն նկարագիրը Արաբկիրի շրջանում 16
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 19
Պատկեր 1. Ընդհանուր առմամբ, ի՞նչ կարծիքի եք Ոստիկանության Արաբկիրի բաժնի, վերջինիս աշխատակիցների և նրանց կողմից մատուցված ծառայությունների մասին 19
Պատկեր 2. Ինչպե՞ս եք գնահատում Ոստիկանության Արաբկիրի բաժնի գործունեությունը հետևյալ ուղղություններում 19
Պատկեր 3. Նշեք թե ի՞նչ չափով եք համամիտ կամ դեմ հետևյալ պնդումներին 20
Պատկեր 4. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք ձեզ ապահով զգում ձեր թաղամասում 20
Պատկեր 5. Ի՞նչ արդյունավետությամբ է Ձեր կարծիքով Ոստիկանության Արաբկիրի բաժինը ապահովում Արաբկիրի համայնքի անվտանգությունը 21
Պատկեր 6. Որքա՞ն վստահություն ունեք հանցագործության կանխարգելման հարցում Արաբկիրի Ոստիկանության կարողությունների նկատմամբ 21

Պատկեր 7. Որքանո՞վ են ձեր կարծիքով հետևյալ հանցատեսակները ազդում Արաբկիրի շրջանի բնակիչների կյանքի որակի վրա 22
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ....23
Ընդհանուր կարծիք և անձնական փորձառություն 23
Գործունեության գնահատական....24
Անվտանգության և հանցավորության հետ կապված խնդիրներ....25
ՀԱՎԵԼՎԱԾ....27
Ընդհանուր առմամբ, ի՞նչ կարծիքի եք Ոստիկանության Արաբկիրի բաժնի, վերջինիս աշխատակիցների և նրանց կողմից մատուցված ծառայությունների մասին 27
Քանի՞ անգամ եք առնչվել Արաբկիրի Ոստիկանության բաժնի որևէ աշխատակցի հետ վերջին երկու տարիների ընթացքում 28
Ի՞նչ կարգի հարցերով եք վերջին անգամ առնչվել Արաբկիրի Ոստիկանության բաժնի հետ 29
Ինչպես ե՞ք գնահատում ձեր վերջին շփման արդյունքում ձևավորված գոհացության աստիճանը 29
Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք ձեզ ապահով զգում ձեր թաղամասում 30
Ի՞նչ արդյունավետությամբ է Ձեր կարծիքով Արաբկիրի Ոստիկանության բաժինը ապահովում ձեր համայնքի անվտանգությունը....31
Որքա՞ն վստահություն ունեք հանցագործության կանխարգելման հարցում Արաբկիրի Ոստիկանության կարողությունների նկատմամբ 31

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2003թ. հուլիսի 29-ին ՀՀ Ոստիկանության և Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության միջև ստորագրվել է Փոխըմբռնման Հուշագիր /ՓԸՀ/ ԵԱՀԿ-ի կողմից Հայաստանում Ոստիկանության Աջակցության Ծրագիր մեկնարկելու վերաբերյալ: ՓԸՀ-ով սահմանված է այն ծրագիրը, որի շրջանակներում պետք է իրականացվեն մի շարք մանրամասն ուսումնասիրություններ Համայնքային Ոստիկանության գործունեության կարիքների և Ոստիկանության կրտսեր պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների վերապատրաստման խնդիրների բացահայտման ուղղությամբ:

Կարիքների ուսումնասիրության առաջին փուլը ներառում է ահազանգերին արձագանքող ծառայության կարողությունների հզորացման աշխատանքներ, երկրորդ փուլն ընդգրկում է բազմաթիվ գործընթացներ, այդ թվում հասարակական կարծիքի հարցում:

Քանի որ Ոստիկանության Արաբկիրի բաժինը ընտրվել է որպես համայնքային ոստիկանության նոր մոդելի կիրառման հարմար տարբերակ, որը հիմնված է թաղամասի բնակիչների և ոստիկանության համագործակցության և հանցագործության կանխարգելման հարցում նրանց ակտիվ մասնակցության վրա, հարցման նպատակն էր սահմանել այն ռազմավարությունը, որի միջոցով հնարավոր կլինի խթանել տվյալ թաղամասում համայնքային ոստիկանության մոդելի ստեղծմանը նպաստող ոստիկանության և տեղական համայնքի միջև փոխհարաբերությունների ձևավորումը, ինչպես նաև կազմակերպչական փոփոխությունները:

Հասարակական կարծիքի հարցումն իրականացվել է Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հայաստանյան մասնաճյուղի կողմից «ԵԱՀԿ կողմից Ոստիկանության աջակցության Ծրագրի մշակման և կարիքների ուսումնասիրության իրականացում- Մաս 2» ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրությունը կազմակերպվել և կատարվել է 2003թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում, իսկ արդյունքները վերլուծվել և ամփոփվել են 2004թ. հունվարին: Հարցման նպատակն էր ներկայացնել Արաբկիր թաղամասի բնակիչների կարծիքների ամփոփ պատկերը Ոստիկանության Արաբկիրի բաժնի գործունեության վերաբերյալ, ինչպես նաև արձանագրել տվյալ համայնքում առկա անվտանգության խնդիրները և դրանց ազդեցությունը բնակիչների կյանքի որակի (կենսակերպի) վրա:

Ծրագիրն իրականացվել է աշխատախմբի կողմից, որի կազմում ընդգրկված էին վերլուծաբան/համակարգողը, հարցման մասնագետը, 10 հարցազրուցավարներն և տվյալները մուտքագրող մասնագետը: ԵԱՀԿ–ի Երևանի գրասենյակից հարցաթերթիկները ստանալուց հետո, հարցման մասնագետը կազմակերպել է հարցաթերթիկի նախնական փորձարկում Երևանի Նոր Նորք համայնքի պատահական եղանակով ընտրված 10 ընտանիքներում: Ծրագրի վերլուծաբան/համակարգողը հարցման մասնագետի հետ համատեղ վերապատրաստել է հարցազրուցավարներին հարցազրույցներ վարելու և հարցաթերթիկներ լրացնելու վերաբերյալ: Այնուհետև, յուրաքանչյուր հարցազրուցավար իրականացրել է փորձնական հարցազրույց տարբեր համայնքների 3 ընտանիքներում:

Հարցման մասնագետի կողմից Արաբկիրի համայնքի տարածքը բաժանվել է 10 գոտիների /տարածքի պաշտոնական քարտեզի հիման վրա/, որոնք բաշխվել են 10 հարցազրուցավարների միջև /տե՛ս «Աղյուսակ Ա»-ն/:

Աղյուսակ Ա. Ընտրանքային կենտրը

Փողոցի անվանումը	Հարցազրույցների թիվը	Փողոցի անվանումը	Հարցազրույցների թիվը	Փողոցի անվանումը	Հարցազրույցների թիվը
Կոմիտաս	121	37 ՊՊ	6	Տիգրանյան	7
Օրբելի	30	29 ՊՊ	2	Այգեկցի	16
Երզնկյան	26	Կալենց	6	47ՊՊ	3
Հակոբյան	7	19 ՊՊ	6	53 ՊՊ	2

Այգեձոր	31	Սունդուկյան	14	38 ՊՊ	1
Բաղրամյան	14	Քանաքեռ ՀԷԿ	7	Շախսուվարյան	4
Վրացական	24	Սեպուհ	1	Ավետիսյան	21
Մալխասյան	2	Սևաստոպոլյան	7	Գուլաքյան	10
Քոչար	73	Գրիբոյեդով	21	17ՊՊ	5
Բակունց	10	25 ՊՊ	3	39ՊՊ	8
Բուդաղյան	8	23 ՊՊ	7	Բաբայան	11
Ֆուրմանով	1	21 ՊՊ	3	Կովկասյան	18
Գյուլբենկյան	44	Աղբյուր Սերոբ	6	Թավրիզյան	9
Բարբյուսի	8	Զարյան	6	Մանուշյան	13
Էմին	22	27 ՊՊ	3	Քեռու փողոց	9
Շիրվանզադե	6	Համբարձումյան	16	49 ՊՊ	4
Սևքարեցի Սաքո	13	Սոսեի	8	Տոլբուխին	1
Կիևյան	27	32 ՊՊ	1	51 ՊՊ	1
Վաղարշյան	26	Արաբկիր	2	45 ՊՊ	2
Նիկոլ Դուման	13	Խաչատրյան	44	Արղության	3
Մամիկոնյանց	36	Փափազյան	57	43 ՊՊ	5
33 ՊՊ	6	35 ՊՊ	6	Այլ համայնքից	1

Հասարակական կարծիքի հարցումը անցկացվել է Արաբկիր թաղամասի 934 բնակիչների /18 տ. և բարձր/ հետ կազմակերպված մասնավոր հարցազրույցների միջոցով: Ընտանեկան տնտեսությունների հետ հարցազրույցի համար կիրառվել է պատահական ընտրանքի եղանակը. ընտրանքը համամասնորեն բաշխվել է Արաբկիրի թաղամասի բոլոր փողոցների միջև: Հարցումն անց է կացվել յուրաքանչյուր փողոցի աջ մայթի յուրաքանչյուր երրորդ առանձնատան բնակչի հետ: Պատասխան չստանալու դեպքում հարցազրույցի համար ընտրվել է հաջորդ առանձնատունը:

Բազմաբնակարան շենքերի դեպքում ընտրվում էր փողոցի աջ մայթի յուրաքանչյուր երրորդ մուտքի առաջին բնակելի հարկի աջ կողմի առաջին բնակարանը: Եթե դուռը չէր բացվում՝ հարցազրուցավարը թակում էր հաջորդ վերին հարկի համապատասխան բնակարանը: Հաջորդ հարկերում կրկին պատասխան չստանալու դեպքում հարցազրուցավարը իջնում էր առաջին հարկ և թակում էր առաջին անգամ ընտրված դռան հակառակ բնակարանի դուռը, այնուհետև նախորդի նման բարձրանում էր հարկերով: Հարցազրույցը նախատեսված էր անցկացնել այն անձի հետ, ում ծննդյան օրը մոտ էր հարցազրույցի օրվան: Երբ թիրախային հարցվողը բացակայում էր կամ հրաժարվում էր պատասխանել հարցերին՝ հարցազրույցի էր հրավիրվում ընտանիքի հաջորդ անդամը, որի ծննդյան օրը մոտ էր հարցազրույցի օրվանը: Հարցազրույցները կազմակերպվում էին ամեն օր երեկոյան 18:00 մինչև 21:00, իսկ շաբաթ-կիրակի օրերին ժամը 13:00-ից 21:00:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ողջ աշխատակազմը (66 ծառայող) մասնակցել է հարցման մասնագետի կողմից իրենց աշխատավայրում կազմակերպված հարցազրույցին: Հարցման ողջ ընտրանքում ընդգրկված մասնակիցների թիվը կազմում էր ընդամենը 1000 մարդ:

934 հոգիանոց ընտրանքի համար տեսականորեն նախատեսված սխալի սահմանը կազմում է +/-3,2՝ 95% հավաստիության պարագայում: Հիմնական բազան (Արաբկիրի թաղամասի բնակչությունը) կազմում է 132 200 բնակիչ: Հարցման տվյալները մուտքագրվել են տվյալները մուտքագրող մասնագետի կողմից և մշակվել են SPSS ֆորմատով, իսկ այնուհետև վերլուծվել են վերլուծաբան/համակարգողի կողմից:

Հարցվողների ժողովրդագրական պատկերն ըստ սեռի (54% կին և 46% տղամարդ) գրեթե համընկնում է ՀՀ բնակչության պաշտոնական տվյալներին (կանայք 51,4% և տղամարդիկ 48,6%)՝ ներկայացված Ազգային վիճակագրական ծառայության վեբկայքում (տես http://www.armstat.am): Հարցազրույցին մասնակցած բնակիչների 6,0%-ը «16-19» տարեկան քաղաքացի էր, 17,1%-ը՝ «20-29», 19,5%-ը՝ «30-39», 26,2%-ը՝ «40-49», 16,8%-ը՝ «50-59» և 14,3%-ը՝ 60-ից բարձր տարիքի անձ: Հարցվողների 43%-ն ուներ մինչև 18 տ. երեխա:

Հարցվող ընտանիքների անդամների միջին թիվը կազմել է 4,2: Հարցազրույցի մասնակիցների 21,5%–ը կառավարական կամ պետական կազմակերպության աշխատակից էր, 20,3%-ը՝ մասնավոր ընկերության աշխատակից, 2,8%-ը՝ գործարար էր կամ տնօրեն, 10,6%-ը՝ ուսանող, 14,1%-ը՝ գործազուրկ, 10,8%-ը՝ թոշակառու, 10,5%-ը՝ տնային տնտեսուհի, 7,9%-ը՝ ինքնազբաղված, 0,7%-ը՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչ և 0,6%-ը՝ այլ զբաղմունքի տեր անձ:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողների 89%-ը տղամարդ էր և միայն 11%-ը՝ կին, ընդ որում 24%-ը «20-29» տարեկան էր, 17%-ը՝ «՛30-39», 47%-ը՝ «40-49», իսկ 12%-ը՝ «50-59» տարեկան:

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պատկեր 1. Ընդհանուր առմամբ, ի՞նչ կարծիքի եք Ստեփանակերտի Արաբկիրի բաժնի, վերջինիս աշխատակիցների և նրանց կողմից մատուցված ծառայությունների մասին



Ընդհանուր առմամբ հարցվողների 2.9%-ն ուներ շատ դրական կարծիք, 27.8%-ը՝ դրական, 44.2%-ը՝ միջին, 19.6%-ը՝ բացասական և 5.4%-ը՝ շատ բացասական:

Պատկեր 2. Վերջին երկու տարիների ընթացքում քանի՞ անգամ եք առնչվել Ստեփանակերտի Արաբկիրի բաժնի որևէ աշխատակցի հետ



Հարցվողների մեծամասնությունը (78.4%) վերջին երկու տարվա ընթացքում երբեք չի առնչվել Ստեփանակերտի Արաբկիրի բաժնի հետ: 934 հոգուց միայն 21.6 %-ն է (202) առնչվել ոստիկանության հետ: Նրանց 2.5%-առնչվել է ավելի քան 5 անգամ, 5.2-ը՝ 2-5 անգամ, 13.9 %-ը՝ մեկ անգամ:

Պատկեր 3. Ի՞նչ կարգի հարցերով եք վերջին անգամ առնչվել Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետ



24.8% դեպքում առնչվելու պատճառը եղել են փաստաթղթային հարցերը, 16.8% դեպքում պատասխանողները եղել են հանցագործության զոհ, 9.4% դեպքում նրանք դիմել են տեղեկատվության համար, 7.9% դեպքում դիմել են պատահարի կամ արտակարգ իրավիճակի հարցով, 6.4% դեպքում եղել է տեղամասային տեսուչի այցելությունը, 4.5% դեպքում կանգնեցվել են ճանապարհային ոստիկանության աշխատակցի կողմից, 4% դեպքում եղել են կասկածյալներ, 3.5 %՝ եղել են ավտոպատահարների մասնակից, 3.0%՝ հետքաննվել են ոստիկանության կողմից, 2.5%՝ ձերբակալվել են և 15.8%-ի դեպքում պատասխանողների կողմից նշվել են Արաբկիրի Ոստիկանության բաժնի հետ առնչվելու այլ պատճառներ:

Պատկեր 4. Ինչպե՞ս կամ որտե՞ղ եք վերջին անգամ առնչվել ոստիկանության հետ



Ոստիկանության հետ վերջին անգամ առնչվել են բաժնում (49.0%), տանը (28.2%), փողոցում (13.4%), հարցվողի աշխատավայրում (4.5%) և այլուր (5.0%):

Պատկեր 5. Գո՞հ եք արդյոք ոստիկանության հետ Ձեր վերջին շփումից



Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետ առնչված հարցվողները տվել են հետևյալ գնահատականները. դրական պատասխան՝ 42.6% (9.9%՝ չափազանց գոհ և 32.7%՝ գոհ), բացասական պատասխան՝ 38.6% (7.9%՝ չափազանց դժգոհ և 30.7%՝ դժգոհ) և չեզոք պատասխան՝ 18.8%:

Պատկեր 6. Ձեր վերջին շփումների արդյունքներով, ինչպե՞ս եք գնահատում Արաբկիրի Ոստիկանության բաժնի գործունեությունը հետևյալ ուղղություններում



Բացասական գնահատականը (շատ վատ և վատ) տրվել է հետևյալ ոլորտներում. Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետ համայնքի անդամների համագործակցությունը (51%), օգտակարությունը (38%) և արդարացիությունը (35%):

Պատկեր 7. Նշեք թե ի՞նչ չափով եք համամիտ կամ դեմ հետևյալ պնդումներին



Պատասխանողների մեծ մասի կարծիքով.

- համայնքի անդամները պետք է ակտիվորեն մասնակցեն ոստիկանությանը հանցագործության կանխարգելման և պայքարի հարցում աջակցելու ուղղությամբ (85 %),
- ոստիկանությունը կատարում է իր պարտականությունները միայն այն անձանց նկատմամբ, ովքեր առաջարակում են դրամ կամ շնորհներ (58%),
- ոստիկանությունը արտոնյալ վերաբերմունք է ցուցաբերում այն անձանց նկատմամբ, ովքեր դրամ և այլ շնորհներ են առաջարկում (85 %),
- ոստիկանությունը արտոնյալ վերաբերմունք ցուցաբերում իր ծանոթների նկատմամբ (87%).

Պատկեր 8. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք Ձեզ ապահով զգում Ձեր թաղամասում



Ըստ հարցվողների 70.4%-ի՝ իրենք ապահով և շատ ապահով են զգում իրենց թաղամասում, 13%-ի՝ չեզոք և 16.6%-ի՝ անապահով և շատ անապահով:

Պատկեր 9. Վերջին տարվա ընթացքում դուք երբևէ մտածել ե՞ք տեղափոխվել այլ շրջան հանցագործության և անվտանգության պատճառներից ելնելով



Հարցվողների 95.9%-ի համար հանցագործության և անվտանգության հարցերը չեն համարվել տեղափոխման պատճառ:

Պատկեր 10. Արդյոք դուք սահմանափակել կամ փոխել ե՞ք ձեր աշխատանքը վերջին մի քանի տարիների ընթացքում հանցագործության զոհ դառնալու վախի պատճառով



98%-ը վերջին տարիներին չեն սահմանափակել կամ փոխել իրենց աշխատանքը վախից կամ հանցանքից դրդված:

Պատկեր 11. Ձեր կարծիքով ի՞նչ արդյունավետությամբ է Ոստիկանության Արաբկիրի բաժինը ապահովում ձեր համայնքի անվտանգությունը



Հարցվողների մոտ 39%-ի կարծիքով Ոստիկանության Արաբկիրի բաժինը լավ է ապահովում իրենց թաղամասի անվտանգությունը, 39%-ն այս հարցին տվել է չնզոք պատասխան և մոտ 22%-ը՝ բացասական պատասխան:

Պատկեր 12. Որքա՞ն վստահություն ունեք հանցագործության կանխարգելման հարցում Արաբկիրի Ոստիկանության կարողությունների նկատմամբ



Հարցվողների ավելի քան 50%-ը վստահ էր (շատ վստահ և որոշակիորեն վստահ), որ Արաբկիրի Ոստիկանությունը ունի բավարար կարողություններ հանցագործությունների կանխարգելման համար, 14.1%-ը չեզոք էր, 21.9%-ը՝ քիչ վստահություն և 11.7%-ը ընդհանրապես վստահություն չուներ:

Պատկեր 13. Որքանո՞վ են ձեր կարծիքով հետևյալ հանցատեսակները ազդում Արաբկիրի շրջանի բնակիչների կյանքի որակի վրա



Հարցվողների մեծամասնության կարծիքով, մարմնավաճառությունը (59%), բնակարանում կատարված գողությունները (68%) և մեքենաներից կատարված գողությունները (65%) ամենազգալի ազդեցությունն են ունեցել Արաբկիրի շրջանում բնակիչների կյանքի որակի հարցում:

Պատկեր 14. Ի՞նչ հիմքերով է ձևավորվել ձեր կարծիքը Արաբկիրի շրջանում հանցավորության և անվտանգության խնդիրների վերաբերյալ



Բազմաթիվ այլընտրանքային պատասխաններ պարունակող հարց: Հաշվարկը կատարվել է 2,145 պատասխաններից

Արաբկիրի շրջանում հանցավորության և անվտանգության խնդիրների մասին պատասխանողներն իրենց կարծիքները ձևավորել են հետևյալ գործոնների հիման վրա. հեռուստատեսային նորությունները՝ 25 %, անձնական դիտարկումները/կարծիքը՝ 23 %, հարևաններից լսած տեղեկությունները/պատմությունները՝ 22%:

Պատկեր 15. Վերջին երկու տարիների ընթացքում դուք երբևէ դարձել ե՞ք որևէ հանցագործության զոհ, որը պատահել է ձեր տարածքում, և որի մասին դուք չեք հայտնել ոստիկանությանը



Հարցվողների 5%-ի կողմից նշվել է, որ իրենք վերջին երկու տարվա ընթացքում եղել են հանցագործության զոհ, բայց այդ մասին ոստիկանությանը չեն հաղորդել:

Պատկեր 15.1. Եթե այո, ապա հանցագործության ինչ՞ տեսակ էր այն



Հաշվարկը կատարվել է 47 պատասխանների համար

47 հարցվողներից մեծ մասը եղել են մեքենաներից կատարված գողության (34%), խուլիգանության (34%) և կողոպուտի զոհ (28%):

Պատկեր 16. Դուք գիտե՞ք վերջին երկու տարիներին հանցագործության զոհ դարձած այլ անձանց, ում կողմից այդ մասին չի հաղորդվել ոստիկանությանը



Հարցվողների ընդհանուր թվի միայն 13.8%-ն էին ճանաչում հանցագործության զոհ դարձած այլ անձանց, որոնք չէին հաղորդել այդ մասին ոստիկանությանը:

Պատկեր 17. Ինչո՞ւ չեք հայտնել հանցագործության մասին



Հարցվողների 47%-ը չի հայտնել, որովհետև չէր կարծում, որ ոստիկանությունը կկարողանար իրենց օգնել, 20%-ը չէր ուզում առնչվել ոստիկանության հետ, իսկ 10%-ի կարծիքով հանցանքն այդքան էլ լուրջ չէր ոստիկանությանը դիմելու համար:

Պատկեր 18. Մենք ցանկանում ենք տեղեկանալ կոնկրետ հանցատեսակի,. անկարգության և կենսակերպի վրա ազդող այլ խնդիրների մասին, որոնք անհանգստացնում են Ձեզ Արաբկիրի շրջանում



Կենսակերպի վրա ազդող այլ հանցանքների, անկարգությունների թվում, հետևյալ խնդիրները ամենաանհանգստացնող հարցերն էին Արաբկիրի շրջանի բնակչությանը. կողոպուտ (պատասխանողների 33%), խուլիգանություն (17%) և բնակարանային գողություն (10%):

Աղյուսակ Բ. Հանցագործության, անկարգության և կենսակերպի վրա ազդող խնդիրների մանրամասն նկարագիրը Արաբկիրի շրջանում

Հանցանքի տեսակը	Վայրը	Օրը և ժամը
Կողոպուտ - 188	Կիևյան փող. - 4 Լամբադա կամուրջի մոտ- 13 Բակերը- 11 Շենքի մուտքերի մոտ - 55 Այգիներ - 6 Կոմիտասի շուկա -18 Ոչ-բանուկ վայրեր -3 Ամենուր- 3 Փողոցներ - 42	կեսօր- 26 երեկոյան - 128 գիշերը - 11 բոլոր ժամերին - 6
Պատճառները • *մթություն* • *անմարդաբնակ վայրեր* • *սոցիալական խնդիրներ* • *գործազրկություն* • *համաներում* • *ոստիկանության անբավարար գործունեություն* • *անօթևանների ներկայություն* • *հանցավոր դարձած չքավորներ* ***Դիտողություններ*** • *ոստիկանության կողմից վերահսկողությունը պետք է խստացվի* • *բնակիչները վախեցած են*		
Խուլիգանություն - 97	Բակեր - 9 Փողոցներ - 9 Դպրոց - 4 Լամբադա կամրջի մոտ - 3 Գիշերային ակումբների մոտ- 3 Կոմիտասի փող. - 3 Այգեձորի փող. - 3 Օրբելու փող. -3 Այլ փողոցներ -3	կեսօր- 8 երեկոյան - 34 գիշեր - 14 բոլոր ժամերին - 7
Պատճառները • *մթություն* • *երեխաների կողմից ինքնաշեն պայթուցիկների օգտագործումը* • *գործազրկություն* ***Դիտողություններ*** • *անհանգստություններ կան երեխաների ապագայի մասին* • *բնակիչները վախեցած են* • *ոստկանությունը դրամ է վաստակում փոքր բիզնեսից կաշառք վերցնելով*		
Սեռական հողի վրա կատարված հարձակումները - 3	Բակեր -1 Հրազդանի գետափի շրջակայքում- 1	երեկոյան - 3
Դիտողություններ • *ոչ ոք չի միջամտում*		
Թմրադեղերի օգտագործումը/վաճառքը - 13	Փողոցներ - 6	
Պատճառները • *գործազրկություն* • *կամայականություն* • *անտարբերություն* • *ոստիկանության համագործակցությունը հանցավոր տարրերի հետ*		
Մարմնավաճառություն - 29	Կիևյան փող. - 13 Բաղրամյան փող. - 5 Այլ փողոցներ -3	
Պատճառները • *ոստիկանության կողմից խթանում* ***Դիտողությունները*** • *մեր ազգին ներհատուկ է* • *ինքնանախաձեռնություն է* • *ընդգրկված են անչափահասներ* • *երևույթը նվազել է* • *երեխաների վրա թողնում է բացասական ազդեցություն*		

Վտանգավոր երթևեկություն - 50	Գրիբոյեդովի փող. - 4 Կիևյան փող. - 7 Օրբելի փող. - 5 Այգեձորի փող. - 6 Այլ փողոցներ -3	կեսօր- 2 երեկոյան - 21 բոլոր ժամերին - 12 ամեն օր - 7
Պատճառները • *հարբած վարորդներ* • *ոստիկանության անգործություն* • *կոռուպցիայի աճ* • *անօրինություն* • *ոստիկանության կողմից միայն անգործներին տուգանելը* ***Դիտողություններ*** • *երթուղայինների վարորդների պատճառով* • *անչափահասների պատճառով* • *վտանգավոր է անչափահասների և չափահասների համար*		
Բնակարանային գողություններ - 60	Հարևանի բնակարանը- 5 Օրբելի փող. - 3 Փափազյան փող. - 3 Այլ փողոցները -3	կեսօր - 11 երեկոյան - 3 գիշեր - 8
Պատճառները • *չքավորություն* ***Դիտողություններ*** • *նրանք չեն հաղորդել հանցանքի մասին, քանի որ վստահություն չունեն ոստիկանության հանդեպ*		
Մեքենաների գողությունները /կողոպուտը - 50	Էմինի փող. - 3 Բակերը - 13 Խաչատրյանի փող. - 5 Այլ փողոցները -3	կեսօր - 4 երեկոյան -31 գիշեր - 28 բոլոր ժամերին - 3
Պատճառները • *ոստիկանության անհոգություն* • *անպատժելիություն* • *մարդիկ վախեցած են* • *չքավորություն* • *հանցավոր տարրերի հետ համագործակցություն* ***Դիտողություններ*** • *գույքի նկատմամբ անապահովություն* • *հաղորդել են հանցագործության մասին, բայց ոչ մի արդյունք*		
Ոստիկանության ծառայողների անօրինական վարքագիծը - 13	**Պետական ծառայողների ապօրինի վարքագիծը - 3**	
Պատճառները • *կոռուպցիա* ***Դիտողություններ*** • *կնոջը ծեծել են ոստիկանի ներկայությամբ* • *ինչպես խնդրեմ ինձ օգնել, երբ ոստիկանն ինքն է խախտում օրենքը* • *ոստիկանությունը երբեք չի պաշտպանում անմեղներին* • *ոստիկանը ծեծում էր մի տարեց կնոջ, որը կանաչի էր վաճառում*		
Կոռուպցիան ոստիկանության համակարգում - 14	**Կոռուպցիայի առկայությունը բոլոր մակարդակներում - 5**	
Պատճառները • *ոստիկանության աշխատակիցների ցածր աշխատավարձը* • *չքավորությունը* ***Դիտողություններ*** • *ոստիկանությունը ծառայում է հարուստ հանցագործներին* • *պետք է փոխենք կառավարման համակարգը* • *ճանապարհային ոստիկանությունը ահաբեկում է վարորդներին* • *ոստիկանները փորձում են շահ ստանալ ոչ միայն հանցագործից, այլև զոհերից* • *փողոցային առևտուրը թույլատրելու համար ոստիկանը վերցնում է 500 դրամ*		
Հարբած տարրերի կողմից անկարգությունները - 17	Մերգելյանի շուկայի տարածքում - 3 Այլ փողոցներում -3	երեկոյան - 5 բոլոր ժամերին - 3
Պատճառները • *գործազրկությունը* ***Դիտողություններ*** • *անհանգստանում ենք երեխաների մասին* • *ես տեսել եմ անձամբ*		
Կրակոցներ – 6	Շենքի մուտքերի մոտ- 2 Այգեկցի փող. - 2 Մերգելյանի ինստիտուտի մոտակայքում -1	կեսօր - 2 երեկոյան - 3
Պատճառները • *հանցագործ են դարձել չքավորները* • *ոստիկանությունը համագործակցում է հանցագործների հետ* ***Դիտողություններ*** • *ոստիկանությունը թույլատրում է ամեն ինչ* • *ոստիկանությունը ոչինչ չէր անում*		

Ապօրինի շինարարություն – 12	Քոչարի փող. - 3 Այլ փողոցներ -3	երեկոյան - 7
Դիտողություններ • *ոչ ոք ուշադրություն չի դարձնում, չնայած եղել են բազմաթիվ բողոքներ*		
Սպանություն - 24	Երզնկյան փող. – 8 Սերմերի խանութի մոտ - 3	կեսօր -8 երեկոյան - 4
Դիտողություններ • *չգիտեմ, միայն լսել եմ*		

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պատկեր 1. Ընդհանուր առմամբ, ի՞նչ կարծիքի եք Ոստիկանության Արաբկիրի բաժնի, վերջինիս աշխատակիցների և նրանց կողմից մատուցված ծառայությունների մասին



Արաբկիրի Ոստիկանության բաժնի գրեթե բոլոր աշխատակիցների կողմից (հարցազրույցի մասնակիցների 98%) արտահայտվել են դրական կարծիքներ բաժնի և իրենց գործունեության, ինչպես նաև իրենց կողմից տրամադրվող ծառայությունների մասին:

Պատկեր 2. Ինչպե՞ս եք գնահատում Ոստիկանության Արաբկիրի բաժնի գործունեությունը հետևյալ ուղղություններում



Արաբկիրի Ոստիկանության բաժնի աշխատակիցները գնահատել են Բաժնի և իրենց գործունեությունը որպես «լավ» և «շատ լավ» բոլոր ուղղություններով:

Պատկեր 3. Նշեք թե ի՞նչ չափով եք համամիտ կամ դեմ հետևյալ պնդումներին



Արաբկիրի Ոստիկանության աշխատակիցները ամբողջովին համաձայն են բոլոր դրական պնդումներին և ամբողջովին դեմ են բոլոր բացասական պնդումներին:

Պատկեր 4. Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք ձեզ ապահով զգում ձեր թաղամասում



Ոստիկանության Արաբկիրի բաժնի գրեթե ողջ աշխատակազմը (98%) նշել է այն մասին, որ իր թաղամասում ապահով է զգում:

Պատկեր 5. Ի՞նչ արդյունավետությամբ է Ձեր կարծիքով Ոստիկանության Արաբկիրի բաժինը ապահովում Արաբկիրի համայնքի անվտանգությունը



Հարցազրույցին մասնակցող Ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակազմի 100% վստահ է, որ ապահովում է բնակիչների պաշտպանվածությունը «լավ» և «շատ լավ»:

Պատկեր 6. Որքա՞ն վստահություն ունեք հանցագործության կանխարգելման հարցում Արաբկիրի Ոստիկանության կարողությունների նկատմամբ



Ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակազմը (հարցազրույցի մասնակիցների 100%) ամբողջովին վստահ է հանցագործության կանխարգելման հարցում իր ունեցած կարողությունների համար:

Պատկեր 7. Որքանո՞վ են ձեր կարծիքով հետևյալ հանցատեսակները ազդում Արաբկիրի շրջանի բնակիչների կյանքի որակի վրա



Ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակազմը նշել է հետևյալ հանցատեսակները որպես շրջանի բնակիչների կենսակերպի վրա ամենամեծ ներգործությունը թողնող գործոններ.

- Սպանություն - 85%
- Թմրադեղերի օգտագործում-73 %
- Բնակարանային գողություն -73%

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ոստիկանության Արաբկիրի բաժնի գործունեության վերաբերյալ հասարակական կարծիքի հարցումը նախատեսված էր 18 հարցերին պատասխանելու համար, որոնք կարելի է բաժանել 3 խմբի. «Ընդհանուր կարծիք և անձնական փորձառություն», «Գործունեության գնահատականը» և «Անվտանգության ու հանցագործության հետ կապված հարցեր»: Բնակիչները պատասխանել են տրված բոլոր հարցերին, իսկ Ոստիկանության բաժնի աշխատողներին տրվել էր միայն 7 համապատասխան հարց: Արդյունքների մասին ստորև ներկայացված վերլուծությունը նույնպես հետևում է հարցման տվյալ կարգին:

Ընդհանուր կարծիք և անձնական փորձառություն

Արաբկիրի համայնքում կազմակերպված հարցմանը մասնակից բնակիչների միայն 30,7%-ն ուներ դրական կարծիք ոստիկանության (շատ դրական և դրական), նրա ծառայողների և ծառայությունների վերաբերյալ, մինչդեռ բաժնի գրեթե բոլոր ծառայողները (98%) իրենց կողմից կատարված աշխատանքը գնահատել են դրական (շատ դրական և դրական): Բնակիչների 44,2%-ի կողմից տրվել է «միջին» գնահատական, իսկ 25,1%-ը արտահայտել է բացասական կարծիք: Այս պատասխանները տարածված բնույթ են կրում «զբաղվածություն» ունեցող բոլոր խմբերի համար, բացառությամբ թոշակառուներից, որոնց պատասխանները կազմում են դրական պատասխանների ընդհանուր թվի 40%-ը (տե՛ս Հավելվածում ներկայացված ***Պատկեր 1-ը***):

Ընդհանուր առմամբ, Հայաստանում թոշակառուները չեն համարվում բնակչության սոցիալապես ակտիվ խավ: Սովորաբար, նրանց կարծիքների համար հիմք է ծառայում արտաքին աղբյուրներից ստացված տեղեկությունները (հեռուստատեսություն, մամուլ, ասեկոսներ և այլն), որը կարող է պատճառ հանդիսանալ խեղաթյուրված կարծիքների ձևավորման համար: Վերջին երկու տարվա ընթացքում ոստիկանության հետ առնչված հարցվողներից միայն 8%-ի թոշակառու լինելու փաստը խոսում է վերոհիշյալ հիմնավորման հավաստիության մասին (տե՛ս Հավելվածում ներկայացված ***Պատկեր 6-ը***):

Ոստիկանության Արաբկիրի բաժնի մասին մյուս քաղաքացիների ընդհանոր կարծիքը նույնպես հիմնված չէր անձնական փորձառության վրա, քանի որ հարցման մասնակիցների (որոնց մեծ մասը կառավարական կամ պետական կազմակերպությունների և մասնավոր ընկերությունների աշխատակիցներ են) միայն 21,6%-ն է դիմել Ոստիկանության բաժին վերջին երկու տարվա ընթացքում: Ավելին, հարցվողներն անցյալում դիմել են Ոստիկանության բաժնին հիմնականում արձանագրությունների և տեղեկատվության կամ այլ հարցերով (ոչ թե անմիջականորեն անվտանգության կամ հանցագործությունների հետ կապված հարցերով) և նրանցից միայն 16,8%-ն է, որ հանցագործության զոհ է դարձել: Ձերբակալվածները (2,5%) հիմնականում գործազուրկներ էին (տե՛ս Հավելվածում ներկայացված ***Պատկեր 8-ը***): Ինչպես նշված է Հավելվածի Պատկեր 5-ում, հարցման մասնակիցներից Ոստիկանության բաժնի հետ առավել հաճախ առնչվել են 20-29 և 30-39 տարեկան երիտասարդները: Ոստիկանների հետ շփումը հիմնականում տեղի է ունեցել Ոստիկանության բաժնում (49,0%) և հարցվողների բնակարաններում (28,2%):

Հատկանշական է, որ հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը նշում է, որ տվյալ թաղամասում հանցավորության և անվտանգության խնդիրների մասին իրենց տեսակետները ձևավորվել են հեռուստատեսությամբ հաղորդված նորությունների (25%), հարևանների և ընկերների (22%), ընտանիքի անդամների կողմից պատմած դեպքերի (12 %), մումուլում հրատարակված հոդվածների (12%) և այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա: Հարցվողների միայն 23%-ի կարծիքն է ձևավորվել անձնական դիտարկումների շնորհիվ, որն էլ համընկնում է ոստիկանության հետ առնչություն ունեցած վերընշյալ 21,6%-ի կողմից արտահայտված կարծիքների հետ: Ոստիկանության Արաբկիրի բաժնի վերաբերյալ առաջին անգամ հարցում կատարելու

արդյունքում բնակիչների 44,2 %-ի կողմից տրված չեզոք («միջին») կարծիքը մեծ մասամբ պայմանավորված է անձնական փորձառության բացակայությամբ և ոստիկանության հետ վերջին տարիներին ունեցած սահմանափակ շփումներով:

Ինչ վերաբերում է Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետ վերջերս կայացած շփումներին, ապա հարցվողների 42,6%-ը չափազանց գոհ կամ բավարարված, իսկ 18,8%-ը չեզոք է արտահայտվել ոստիկանության գործունեության մասին: Ոստիկանության հետ ունեցած իրենց անձնական փորձառության վերաբերյալ հարցերին հարցման մասնակիցները տվել են առավել կոնկրետ (դրական և բացասական) և նվազ անորոշ պատասխաններ՝ ոստիկանության մասին արտահայտած ընդհանուր կարծիքների համեմատ:

Գործունեության գնահատական

Ոստիկանության Արաբկիրի բաժնի հետ շփված բնակիչների 35%-ը ոստիկանության համագործակցությունը համայնքի հետ գնահատել է պասիվ, մինչդեռ հարցվողների 51% և 38%-ը համապատասխանաբար բացասական գնահատական են տվել ոստիկանության արդարացիությանը և օգտակարությանը: Միջին հաշվով, քաղաքացիների 30%-ին անհանգստացնում էր ոստիկանության ոչ բավարար մասնագիտական վարքագիծը, վատ վերաբերմունքը և գիտելիքների պակասը, և միայն 13,8 %-ին էր անհանգստացնում ոստիկանության ծառայողների ներկայությունը: Միևնույն ժամանակ Ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակազմը ոստիկանության գործունեությունը բոլոր ոլորտներում գնահատել է դրական և շատ դրական:

Ըստ ուսումնասիրության արդյունքների, հարցվողների մոտ 62% չի կարծում, որ համայնքի անդամները հարգանք և վստահություն ունեն ոստիկանության հանդեպ: Բնակիչների 73%-ն այն կարծիքին չէ, թե ոստիկանության ծառայողները ցուցաբերում են հավասար վերաբերմունք բոլոր քաղաքացիների նկատմամբ, ընդ որում 54%-ը դեմ է այն կարծիքին, որ ոստիկանությունը չունի այլ ընտրություն, քան իր լիազորությունները միայն այն անձանց նկատմամբ կիրառելը, ովքեր դրամ կամ շնորհներ են առաջարկում: Հարցվողների ճնշող մեծամասնությունը համաձայն է հետևյալ պնդումներին. «Համայնքի անդամները պետք է ակտիվորեն մասնակցեն հանցագործությունների կանխարգելման և դրա դեմ պայքարում ոստիկանությանն օաջակցելու գործընթացում» (85%), «Ոստիկանությունը իր պարտականությունները կատարում է միայն այն անձանց հանդեպ, ովքեր դրամ կամ շնորհներ են առաջարկում» (58%), «Ոստիկանությունը արտոնյալ վերաբերմունք է ցուցաբերում այն անձանց նկատմամբ, ովքեր դրամ կամ շնորհներ են առաջարկում (85%) և իրենց ծանոթներին (86%): Միաժամանակ Ոստիկանության Արաբկիրի բաժնի աշխատակիցները լիովին համաձայն են բոլոր դրական պնդումների հետ և խիստ դեմ են բացասականներին:

Տարբեր ուղղություններով ոստիկանության աշխատակազմի գործունեության գնահատման արդյունքների համեմատ, ելնելով հարցվողների անձնական փորձից, վերը շարադրված պնդումների նկատմամբ վերաբերմունքը շատ ավելի բացասական էր: Այս փաստը մասամբ պայմանավորված է նրանով, որ հարցման մասնակիցների համար շատ ավելի հեշտ է պատասխաններ տալ կոնկրետ հարցերին կամ համաձայնել առավել հստակորեն ձևակերպված դատողություններին: Երկրորդ, ներկայումս հանրային ծառայությունների անբավարար մատուցման և դրանց մեծ մասից օգտվելու հնարավորությունների բացակայության պայմաններում, նշված հարցադրումներն ավելի ցավոտ են ընդունվում մարդկանց կողմից: Այնուամենայնիվ, այս բացասական գնահատականը հիմնված չէր հարցվողների անձնական փորձառության վրա, այլ արտացոլում է նրանց ընդհանուր պատկերացումները Հայաստանի ոստիկանության գործունեության վերաբերյալ (որպես փակ և ոչ արդյունավետ հանրային ոլորտ):

Անվտանգության և հանցավորության հետ կապված խնդիրներ

Ոստիկանության Արաբկիրի բաժնի անձնակազմի միայն 27,2%-ն է (ովքեր 98 %-ով ապահով են զգում իրենց տեղամասում) բնակվում Արաբկիր համայնքում (տե՛ս Հավելվածի Պատկեր 17): Ուսումնասիրության մեջ ընդգրկված բնակիչների մեծ մասը իր թաղամասում իրեն ապահով (54.7%) և շատ ապահով է զգում (15.7%), և միայն 16,6%-ն է իրեն անապահով զգում, իսկ չեզոք պատասխանը կազմում է 13%: Տարիքային բոլոր խմբերում, տղամարդիկ իրենց ավելի ապահով են զգում, քան կանայք (տե՛ս Հավելվածի Պատկեր 12): Հարցման մասնակիցների միայն 4,1%-ն է ցանկություն ունեցել տեղափոխվելու այլ տարածք հանցավորության և անվտանգության հետ կապված խնդիրներից ելնելով, և նրանցից միայն 2,0%-ն է ստիպված եղել վերջին մի քանի տարում իր փոխելու կամ սահմանափակելու իր գործունեությունը հանցագործության զոհ դառնալու վախից: Այն փաստը, որ քաղաքացիներից շատ քչերն են մտածել իրենց գործունեության վայրը փոխելու կամ սահմանափակելու մասին, պայմանավորված է Հայաստանում քաղաքացիների մեծ մասի առջև ներկայումս ծառացած ֆինանսական և այլ դժվարություններով:

Այս բոլոր դիտարկումները կարծես հակասում են այն փաստին, որ ինչպես արդեն նշվել է, բնակիչների ճնշող մեծամասնության կարծիքով ոստիկաններն իրենց պարտականությունները կատարում են միայն այն անձանց հանդեպ, ովքեր դրամ կամ շնորհներ են առաջարկում, ինչպես նաև իրենց ընկերներին համար: Բնակիչների միայն 39%-ն է կարծում, որ ոստիկանությունը լավ է պաշտպանում իրենց թաղամասը, մինչդեռ հարցվողների 39%-ը չեզոք պատասխան է տվել, իսկ 22%-ը՝ բացասական: Ինչպես արդեն նշվել է նախկինում, Արաբկիրի համայնքի հարցման ենթարկված բնակիչների 62%-ի կարծիքով, համայնքի անդամները չեն վստահում և հարգում ոստիկանությանը:

Նախորդ միտքը հաստատվում է նաև տեղի ունեցած հանցագործության մասին ոստիկանությանը չհայտնելու երևույթի հիմնավորումը. «Ես վստահ չէի, որ ոստիկանությունը կկարողանա օգնել» (47%), «Ես չէի ցանկանում առնչվել ոստիկանության հետ» (20%): Միևնույն ժամանակ, ոստիկանների 100%-ն էլ վստահ էր, որ ոստիկանությունն ապահովում է քաղաքացիների անվտանգությունը բարձր (նաև շատ բարձր) մակարդակով:

Այս հակասությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով: Օրինակ, «սենիական» թաղամասում անվտանգության հարցը հնարավոր է, որ պայմանավորված չլինի ոստիկանության ծառայության պատշաճ գործունեությամբ: Հայ ժողովրդին բնորոշ կենցաղային /հասարակական/ առանձնահատկություններից մեկն այն է, որ հարևանների միջև առկա են մտերիմ հարաբերություններ, նրանք սովորաբար ճանաչում են իրենց տարածքի գրեթե բոլոր բնակիչներին: Անծանոթի ներկայությունը բակում կամ շենքի մուտքի մոտ բնակիչների կողմից կարող է կասկածների տեղիք տալ: Մարդիկ սովորություն ունեն ժամերով նստելու բակում կամ պատշգամում (հատկապես երեկոյան ժամերին)՝ ուսումնասիրելով թաղամասում տիրող վիճակը, որի արդյունքում իրենց ինչ որ չափով ապահով են զգում: Այս դիտարկումը հիմնականում ճշմարիտ է այն բնակիչների առումով, ովքեր չեն առնչվել ոստիկանության հետ:

Ինչ վերաբերվում է այն հարցվողներին, որոնք հավանաբար իրենց կարծիքը արտահայտել են սենիական փորձառությունից կամ դիտարկումներից ելնելով, ապա նրանց միայն 34,1%-ն է դիմել Արաբկիրի Ոստիկանության բաժնին՝ անվտանգության եւ հանցագործության խնդիրներին առնչվող հարցերով: Հետևաբար, 202 հարցվողներից միայն 68-ն էին կարող բավարար չափով տեղյակ լինել ոստիկանության կողմից ձեռնարկվող կանխարգելման և պաշտպանական միջոցառումների մասին: Այլ կերպ ասած, իրար հակասող պատասխանների առկայությունը ամենայն հավանականությամբ բացատրվում է ոստիկանության բաժնի պարտականությունների իրականացման մասին հստակ պատկերացման բացակայությամբ և տեղեկությունների սղությամբ: Այս հարցի կապակցությամբ արտահայտված կարծիքների ճշգրիտ պատճառները բացահայտելու համար հարկավոր է ստեղծել բնակիչներից կազմված ֆոկուս խմբեր:

Ոստիկանության ողջ անձնակազմը շատ մեծ վստահություն է տածում օրինազանց գործողությունների կանխարգելման գործում սենիական կարողությունների հանդեպ:

Սակայն հարցման մասնակից բնակիչների միայն 52%-ն է, որ նույնպես հայտնել է իր վստահությունը հանցագործությունների կանխարգելման հարցում Արաբկիրի Ոստիկանության կարողությունների մասին, մինչդեռ 34%-ը քիչ կամ բոլորովին վստահություն չունի: Հետաքրքիր է, որ ընդհանուր առմամբ հանցագործություններից մարդկանց պաշտպանելու կարողությամբ հանդերձ՝ ոստիկանությունը, քաղաքացիների կարծիքով, չի կատարում իր պարտականությունները պատշաճորեն:

Քաղաքացիների կարծիքով տվյալ թաղամասում կյանքի որակի (կենսակերպի) վրա ամենամեծ բացասական ազդեցությունը թողնում են հետևյալ հանցատեսակները. բնակարանային գողություններ (68%), ավտոմեքենաներից կատարված գողություններ (65%) և մարմնավաճառություն (59%):

Թեպետ հարցվողների մեծ մասը հանցավորության և անվտանգության խնդիրների մասին իրենց տեսակետները ձևավորել են, ինչպես արդեն ասվել է, արտաքին աղբյուրներից ստացված տեղեկությունների հիման վրա, այնուհանդերձ, չի բացառվում, որ նրանք կարող էին ականատես լինել իրենց թաղամասում տեղի ունեցած վերոհիշյալ հանցագործություններին: Մյուս կողմից, քաղաքացիները սովորաբար չեն հայտնում այն հացագործությունների մասին, որոնցում իրենք ներգրավվել են ուղղակիորեն կամ անուղղակիորեն: Օրինակ, հարցվողների հազիվ թե 5%-ն ընդունեց այն փաստը, որ հանցանքի զոհ է եղել և չի հայտնել այդ մասին համապատասխան մարմիններին, իսկ հարցման մասնակիցներից 13%-ը նշել է այն մասին, որ ճանաչում է հանցագործությունից տուժած այլ քաղաքացիների, որոնք պարզապես չեն դիմել ոստիկանության օգնությանը: Հարցվողները հիմնականում տուժել են ավտոմեքենաների գողությունից (34%), խուլիգանությունից (34%) և կողոպուտներից (28%): Քաղաքացիներին անհանգստացնող կոնկրետ հանցատեսակի, անկարգությունների և իրենց համայնքում բնակիչների կենսակերպի վրա բացասաբար ազդող գործոնների վերաբերյալ պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. կողոպուտ (33%), խուլիգանություն (17%), բնակարանային գողություն (10%) և այլն:

Վերջապես, հարկ է նշել, որ սպանությունների (85%), թմրադեղերի օգտագործման/վաճառքի (73%) և բնակարանային գողությունների (73%) դեպքերը Ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից նշվել են որպես այն ամենածանր հանցատեսակները, որոնք ներգործում են Արաբկիրի թաղամասի բնակիչների կենսակերպի վրա: Եթե բնակարանային գողությունները քաղաքացիների և ոստիկանների կողմից նշվել են որպես լուրջ հանցատեսակներ, ապա մյուս դեպքերի մասին հակասական կարծիքները կարելի է բացատրել այն փաստով, որ ոստիկանությունը կարծիք է հայտնել թաղամասում կատարված հանցագործության իրական վիճակի մասին տեղեկությունների հիման վրա, ինչը հասու չէ մնացած բնակչությանը:

Այնուամենայնիվ, բնակարանային գողությունները տվյալ թաղամասի վտանգավոր հիմնախնդիրներից մեկը համարելը հենց այն միակ դեպքն էր, երբ քաղաքացիների և ոստիկանության կարծիքները համընկնում էին: Մնացած բոլոր դեպքերում, անկասկած ոստիկանության տեսակետը զգալիորեն տարբերվում է բնակիչների տեսակետից: Այս փաստը հարկավոր է դիտել որպես հիմնախնդիր Արաբկիրում համայնքային ոստիկանության նոր մոդելը ներդնելու առումով, քանի որ ոստիկանությունը կարծես չունի օբյեկտիվ ինքնագնահատական տալու կարողություն, ընդունելու համար այն փաստը, որ կան իրենց գործունեության հետ կապված խնդիրներ և իրենց ծառայություններից բնակիչների դժգոհություն, ինչը հնարավոր է իմանալ միայն բնակիչների հետ պարբերաբար շփվելու միջոցով: Երբ ոստիկանության բաժինը կդառա առավել մատչելի, թափանցիկ և հաշվետու համայնքի բնակիչների համար, միայն այս դեպքում հնարավոր կլինի ներգրավել համայնքի բնակչությանը ոստիկանության կողմից հանցագործության կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքներում: Այս նպատակին կարելի է հասնել կազմակերպչական փոփոխությունների խթանման, ոստիկանության ներսում աշխատակիցների կադրային կարողությունների հզորացման, ինչպես նաև հանցագործությունների և անվտանգության հարցերի մասին հասարակության իրազեկվածության մակարդակը բարձրացնելու միջոցով:

ՀԱՎԵԼՎԱԾ

Ընդհանուր առմամբ, ի՞նչ կարծիքի եք Ոստիկանության Արաբկիրի բաժնի, վերջինիս աշխատակիցների և նրանց կողմից մատուցված ծառայությունների մասին

Պատկեր 1. Պատասխանների բաշխումն ըստ սեռի և տարիքի



Պատկեր 2. Պատասխանների բաշխումն ըստ զբաղվածության



Պատկեր 3. Պատասխանների բաշխումն ըստ բնակիչների և ոստիկանության շփումների հաճախականության



Քանի՞ անգամ եք առնչվել Արաբկիրի Ոստիկանության բաժնի որևէ աշխատակցի հետ վերջին երկու տարիների ընթացքում

Պատկեր 4. Պատասխանների բաշխումն ըստ սեռի և տարիքի



Պատկեր 5. Պատասխանների բաշխումն ըստ տարիքի



Պատկեր 6. Պատասխանների բաշխումն ըստ զբաղվածության



Ի՞նչ կարգի հարցերով ենք վերջին անգամ առնչվել Արաբկիրի Ոստիկանության բաժնի հետ

Պատկեր 7. Պատասխանների բաշխումն ըստ սեռի



Հաշվարկվել է 202 օրինակով

Պատկեր 8. Պատասխանների բաշխումն ըստ զբաղվածության



Ինչպես ե՞ք գնահատում ձեր վերջին շփման արդյունքում ձևավորված գոհացության աստիճանը

Պատկեր 9. Արաբկիրի Ոստիկանության բաժնի օգտակարության աստիճանի գնահատականը



Հաշվարկվել է 202 օրինակով

Պատկեր 10. Պատասխանների բաշխումն ըստ սեռի և տարիքի



Պատկեր 11. Պատասխանների բաշխումն ըստ զբաղվածության



Ընդհանուր առմամբ, որքանո՞վ եք ձեզ ապահով զգում ձեր թաղամասում

Պատկեր 12. Պատասխանների բաշխումն ըստ սեռի և տարիքի



Ի՞նչ արդյունավետությամբ է Ձեր կարծիքով Արաբկիրի Ոստիկանության բաժինը ապահովում ձեր համայնքի անվտանգությունը

Պատկեր 13. Պատասխանների բաշխումն ըստ սեռի և տարիքի



Պատկեր 14. Պատասխանների բաշխումն ըստ զբաղվածության



Որքա՞ն վստահություն ունեք հանցագործության կանխարգելման հարցում Արաբկիրի Ոստիկանության կարողություններին նկատմամբ

Պատկեր 15. Պատասխանների բաշխումն ըստ սեռի և տարիքի



Պատկեր 16. Պատասխանների բաշխումն ըստ զբաղվածության



Պատկեր 17. Արաբկիրի Ոստիկանության բաժնի աշխատակիցների բնակավայրը /համայնքները/



Կենտրոն	6.06%	Քանաքեռ-Զեյթուն	12.1%
Դավիթաշեն	3.03%	Ավան	4.5%
Մալացիա-Սեբաստիա	7.6%	Նոր-Նորք	6.1%
Կոտայքի մարզ	3.0%	Շենգավիթ	12.1%
Արաբկիր	27.32%	Էրեբունի	13.6%
Աջափնյակ	4.5%		